

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԼԸՃՃԵԱՆ

(ՊԱՐՈՅՐ - ՀԱՅԿԱԶՆ)

1868 — 1898

Կուրի դաշակն հետու, անծանօթ երկնքի մը տակ, հայրենիքին կարօտը քաշելով, բայց մինչև վերջին րօպէն յոյսերով ու յուզումներով լեցուն, աչքերը փակեց շատերէն սիրած Պարոյրը՝ գերեզմանի խորհրդաւոր լուսնեանը համար:

Անյարմար ժամանակին վրայ կը հասնէր մահը, որուն դէմ անկարող կը գտնուէր յեղափոխականի կոխը մղելու գեռ ինք շատ ուժ եւ պահանջ կը զգար իր մէջը օգտակար լինելու սկսած փրկարար շարժման, գեռ բաւական չէր ինչ որ քրտնէ, ու եւրագներ ունի. . . բայց մահը, անզէն ու աննկատելի մահը Համիրեաներէն ալ անողոք ու անխիղճ է երբեմն:

Հին «աշխատաւոր» ներէն է եղած ինքը:

Ինչ որ հայրենիքին մէջ (Տիւրիկ) տակաւին փոքր աշակերտ, դասարանական կրակոտ վիճարանութիւններու եւ կրօններու միջոցին՝ իր ձայնն ու գաղափարներն էին որ կը լռեցնէին աղմուկները. շուտով իր սիրելի ուսուցչին՝ Թիրայրի (Մարտիրոս Պոյաճեան) բարեկամը կը լինի, շատ գիշերներ իսկ վարժարանին մէջ կ'անցընէ անոր հետ, նորնոր ծանօթութիւններով իր շատ րան գիտնալու պահանջին գոհացում սալու համար: Ուսուցչէն ստացած գաղափարները նպաստեցին իրեն նաեւ յստակ տեսնել շատ տխուր պատկերներ իր ապրած միջավայրին մէջ: Այդ օրէն իր մէջ խորհող եւ բողոքող յեղափոխականը կը կազմակերպուէր արդէն:

Տիւրիկը նեղ կուզար իրեն, ու սորվելու, զարգանալու ծարաւով 1883-ին Պոլիս կ'երթայ: Ժամանակ մը փաստարանի մը մօտ կ'աշխատի, եւ ետքը յաջող քննութիւն մը տալով, կ'ընդունուի Պոլսի իրաւաբանական վարժարանը:

Իր ընտիր բարեմասնութիւններու եւ գրաւիչ լինաւորութեանը համար իր հետ ծանօթացողներէն մեծ մասը իրեն համակիր եւ զինքը սիրող բարեկամներ եղած են, որոնց թւին մէջ նաեւ օտարազգիներ:

Երբ Հայ Յեղափոխութիւնը իր Գործին հիմերը սկսաւ գնել Կ. Պոլսի մէջ, Պարոյր, ինքն ալ ուզեց այդ աշխատութեան մէջ իր բաժինն ու տեղն ունենալ: Վարագ ու քայքայած կառավարութիւն մը իրեն համար կեանք եւ փրկութիւն միայն ճնշումներուն եւ ոճիրներուն մէջ կը գտնէր, եւ օր օրի, շնորհիւ վեհափառ Համիրին, — որուն նման խելացի փատիշահ գեռ ունեցած չեն եղեր տաճիկները. . . քրիստոնեաները ոչխարներէն աւելի մորթել տալու իր խաօս ալ խուժանին — ճնշումները անելի ծանրացան ու ոճիրները բազմապատկեցան: Պարոյր եւ իրեն պէս խոր-

հողները անարեկած՝ աչք չպէտք է փակէին ու լուռ վկաներ լինէին հազարամէկ զարհուրելի եւ շատ տխուր դէպքերու, որ սովորական երեւոյթներ էին Օսմ. Հայաստանի մէջ: Հայերէն շատերը՝ ճակատագրային օրէնքով հանգամանքներուն համակերպելու վարդապետութիւնն էր որ կը քարոզէին. կարծէք թէ հային ճակատագիրն եղած լինէր ոչխարի պէս գլուխ երկնցնել զանակին տակ ու մորթւող հաւի նման ջղաձգօրէն տառապիլ:

Պարոյր կը միանար անոնց, որոնք, նախանձախնդիր իրենց Մեծ-ընտանիքի պատւին, կ'ուզէին կեղտերը մաքրել եւ իրենց իրաւունքներուն տէրը լինիլ: Բիրտ ու վարագ բռնակալութեան դէմ բողոքող, մաքառող, կրուող Ուժ պէտք էր ստեղծել: Ու Պարոյրի ջանքերն եղան ամէն ձախողութիւն ճակատագրին վերագրող իր ազգակիցները սթափեցնել, ցնցել եւ ահաւոր իրակաւորութեանը վրայ ուշադրութիւն դարձնել տալ: Իր այս յոգնութիւնները ժամանակին մեծ մասը կը խլէին. բայց ոչինչ. իր ասպարէզը բողոքով ին սարբեր էր: Փաստաբանութիւնը բաւական անցուկ արեւատ մըն է Թիւրքիոյ մէջ, բաւական է որ դատաւորներու սահմանած օրէնքներուն համակերպիլ Օրէնք ու կարգ աճապարհի երկրի մը մէջ, ուր ծայրէծայր անօրէնութիւնն ու անկարգութիւնն են որ բացարձակ կ'իշխեն. ուր կարմրեցած կատաղի աչքեր եւ գողացող արիւնխուժ կզակներ լորձունքներով սրբութիւններ կեղտոտելէ եւ մարմիններ բզբտելէ վատ ուրիշ բանի անընդունակ են: Ու այս ամէնուն դիմաց, խեղճ փաստաբանին գործը պիտի լինի համակերպիլ, աչք գոցել եւ արդարութեան անուսով խօսքեր լոջողել: Համակերպիլ, այդ բառը իր բառգրքին մէջ չկար:


Իր գաղափարներուն համախոհ էին նաեւ իր խուժին ընկերները, որոնց ճամբայ ցոյց կուտար անվատ առաջ գնալու իր հետ՝ դէպի կուրի գաշտը: Իր գործունէութիւնը գնահատուած էր արդէն Յեղ. վարչութիւնէն, եւ 1888 ին երբ Յ. Չաքրեան ու երկու ընկերները՝ իրենց դիմակներէն զրկուած՝ կ'արանաւորութեան անկէ, ընդհանուր հաւանութեամբ Պարոյրը անդամ կ'ընտրուի վարչութեան, ուր միշտ գործօն եւ եռանդոտ մասնակցութիւն մը կ'ունենայ:

Ինքը մէկն է անոնցմէ որ կը համոզեն ու կը դրդեն վարչութիւնը, խզելու ամէն յարաբերութիւն «Արմէնիա»-ի խմբագրին հետ:

Քիչ ետքը իր ընկերներով բանակցութեան կը մտնէ «Հնչակ»-ի կողմէն եկած պատգամաւորներուն հետ, որով կ'որոշուի «Հնչակ»-ը ունենալ իր իրենց օրգանս: Կը մասնակցի 1890 յուլիս 12-ի ժողովին, ուր կ'որոշուի կատարել յուլիս 15-ի ցոյցը:

14 յուլիս 1890-ի գիշերուան ժողովին թիւրք կառավարութեան յանձնելիք պահանջագրին պատրաստողներէն մէկը կը լինի:

Եւ յուլիս 15-ի ցոյցին ներկայ ու գործօն դերերով



ԳՐԻԳՈՐ ԳԼԸՃՃԵԱՆ

(ՊԱՐՈՅՐ - ՀԱՅԿԱԶՆ)

մասնակից կը գտնուի՝ Մայր-Եկեղեցիին ու Պատրիարքարանին մէջ եւ ետքը թափօրին հետ խառնած:

Յոյցէն ետքը, գիշեր ու ցորեկ, աւելի մեծ եռանդով ու անվեհերութեամբ կը լարէ իր ուժերը: Սեպտեմբերին, քանի մը օրուան բաղակայութենէ ետքը, կրկնապարտան կ'երթայ, տնօրէնը զինքը քօմիսարի մը եւ կրկու ոստիկանի կը յանձնէ:

Մամբրէն մասնաւոր էր զինքը: Հարցաքննութիւններու միջոցին, ոստիկանապետին ներկայութեանը, անվախ, համարձակ, զայրոյթով լեցած, երբեք չէ խորհած խուսափիլ իր մասին եղած ամբաստանութիւններէն: «Ես, այո՛, յեղափոխական եմ. թէ ինչու յեղափոխական եմ՝ ձեզի հարցուցէք: Ձեր ոճիրներուն զիմաց, ձեր վայրագ ցանկութիւններուն առջեւ՝ մեր արցունքներն ու ազերաները զուր անցան ու զուր պիտի անցնին. դուք, կառավարութեան պաշտօնեաները, արդարութիւնը գործ դնելէ բոլորովին հեռու, կը կազմակերպէք ու կը քաջալերէք ձեր ժողովուրդը՝ մեր կեանքին ու պատւին հետ խաղալու իր ուզածին պէս: Այլ հերիք: Յեղափոխական եմ ես, ու մասնակցով ձեր առջեւ եկած, ձեր շնորհներուն երբեք չպիտի կարօտիմ. ամէն բան աչքս առած էի առաջին օրէն. կարող էք նոյնիսկ մեռցնել իս, արդէն ուրիշ բան չէ կարելի սպասել ձեզմէ: Իսկ եթէ ազատեմ, կրկին յեղափոխական պիտի տեսնէք իս. ուրիշ ճամբայ չկայ»:

Այս խօսքերուն պատասխանը, աւելորդ է ըսել ծաղրանքներ ու ծանր պատիժներ եղած են: Օր մը, հարցաքննութեան միջոցին, կր Պարոյր զիտու կուտայ Նազըմին թէ թիւրք կառավարութեան բարբարոս ընթացքը դէպի կործանում կ'առաջնորդէ երկիրը, Նազըմ թունաւոր ժպիտով մը կը դառնայ կ'ըսէ. «Մենք քու բոլոր ըսածներդ գիտենք. բայց արդեօք դուն ու ձանկիւրեանն էք որ քայքայած տան մը հիմերը գնել կ'ուզէք:» Նազըմ ետքը համոզուեցաւ արդէն որ Պարոյրի եւ իր ընկերներուն սկսած գործը կը շարունակէր, հակառակ իր բոլոր զգուշութիւններուն: Հայ Յեղափոխութիւնը, ալ իրեն համար, առասպելի այն բազմազլխանի-օձն էր, որուն զլուխը միշտ կ'աճէր հակառակ կորստուններուն:

Խոհեմութիւն չէր Պարոյրի պէս (խուճարարը)՝ը Պոլիս բանտարկած պահել. եւ կը վճուի Ա.քեա աքսորել: 1890 ղեկսեմբերին Ա.քեա կը հասնի. իր մասին ոստիկանապետէն հեռագրեր խրկած են Ա.քեայի հազարապետին՝ որպէս զի զինքը խիստ հսկողութեան ենթարկէ: Սակայն Պարոյր միջոց եւ առիթներ կը գտնէ աքսորական արարներուն եւ զինուորներուն հասկցնելու թէ ի՞նչպէս անոնք ալ իրեն բախտակից են. քիչ ժամանակի մէջ աքսորականներուն համակրանքը կը գրաւէ: Հազարապետը կը խորհէր «գժոխքին մէջ իսկ ապստամբ» Պարոյրն ու ձանկիւրեանը հեռացնել տալ, երբ արդէն ընդհանուր ներման կ'արժանանան 1896 ղեկտեմբեր 21-ին Պարոյր հակառակ արտասահման անցնելու իրեն եղած առաջարկի մտ, Բէյրութի վրայով Պոլիս կ'անցնի՝ հաւատարիմ իր յեղափոխականի պարտաւորութեան: Պօլիս հասնելուն իսկոյն կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Խորտակած առողջութեամբ բանտէն ազգային հիւանդանոցը կը փոխադրուի ոստիկանական հսկողութիւններու տակ:

Քիչ ետքը բժիշկներու խորհրդով եւ իր բարեկամներու ջանքերով կը արտաքուի Ալէքսանդրիա երթալ՝ զլիսաւորապէս իր քայքայած առողջութիւնը դարմանել տալու:

1897 օգոստոսին Ալէքսանդրիա հասնելով՝ բոլորովին կը մոռնայ իր հիւանդութիւնը, ու իր վառ եռանդով կը հետամտի եւ կը ջանայ օգնելու յեղափոխական կազմակերպութեան: Կ'արիւնտարի իր սիրտը լսելով բոլոր այն զեղծումները, պառակտումները, որ մուտ գտած էին իր կուսակցութեան մէջ: Միութիւնը հնարաւոր ընելու համար զուր անցած ջանքերէ ետքը, կը թողուին կուսակցութիւնը՝ որ իր կեղտերը մաքրէ եւ իր «մեռելները թաղէ»: ու կը յարի Դաշնակցութեան, որուն գործն ու գործիչները բաւական մօտէն սերպար էր:

Մեր ընկերները ուրախութեամբ կը մեկնեն իրենց ձեռքը այդ դժբախտ, բայց արի մարդուն, որը եթէ անծանօթ եղած ատեն կը յարգէին, հիմա... ճանչնալէն ետք, կը սիրէին արդէն:

Ժամանակ մը եւս Կահիրէ բնակելով, այնտեղի հայերուն հետ կը ստիպուի խօսիլ այնպէս ինչպէս Պոլիս եւ Ա.քեա. դեռ շատերը չէին ըմբռնած թէ ինչ է յեղափոխութիւնը եւ ո՞վ է յեղափոխականը, թէ եւ օրը տասն անգամ ամէն մարդ անէ՛ծքներու եւ քննապատութիւններու տարափ մը կը տեղար հայ յեղափոխականի զլիսուն:

1898 մարտ 18-ին Կահիրէի կողմէ պատգամաւոր կ'ընտրուի Եղիպտոսի Շրջանական Ժողովին համար, ուր խղճմտութեամբ կը կատարէ կօմիտէին յանձնարարութիւնները:

Բայց օր օրի աւելի կը խախտէր իր առողջութիւնը. բժիշկը հանդարտ մնալ, չյուզել կը պատուիրէր իրեն, սակայն կարող էր մտիկ ընել: Իր ընկերները մտածեցին որ Սթէնքի մէջ աւելի պիտի կարողանար հանգիստ մնալ եւ իր հիւանդութիւնը դարմանել տալ, ու խրկեցին զինքը Սթէնք, ուր շրջապատուեցաւ բարեկամներէ ու համակիրներէ:

Թոքախտը պինդ գրկած էր իր գոնը: Պարոյր գիտէր թէ պիտի մեռնի, հեռու իր հայրենիքէն ու մայրիկէն, այդ օտար ու անծանօթ քաղաքին մէջ: Ու ինքզինքը մոռցած՝ կը յիշէր գործն ու իր ընկերները եւ իր մօտ գտնուողներուն, որոնց մէջ նաեւ իր սիրելի ձանկիւրեանին, կը կտակէր անձնիրութիւն գործի սրբութեան առջեւ:

Յուլիս 28-ին, կրեքչարթի մը, իր կարօտ աչքերը փակեց՝ հիւանդանոցին մէջ անարատ ու պաշտելի Պարոյրը:

Սթէնքի մէջ հայերը կրցան ցնահատել զինքը եւ պատուելու համար անոր անձն ու յիշատակը ըրին ինչ որ կրցան:

Կահիրէի մէջ հանգանակութիւն մը բացւած է մահաբան մը կանգնելու անոր յիշատակին:

Պարոյրի կեանքն ու յիշատակը չպիտի մոռցի, իսկ իր կապը մեր ամէնուս գործունէութեան ծրագրին առաջին պարբերութիւնն է արդէն:

Խ Ե Լ Ա Ք Ա Ր Ը

Կրէտէն պարպած է: Տաճիկ զօրքը գլխիկոր հեռացաւ կղզից: Քրիստոնեաների անէ՛ծքները եւ միւսիւրմանների ողբն ու հառաչանքը ուղեկից եղան նրան: Ոստիկանները կամ հեռացան ինքնաբերաբար եւ կամ բռնի դուրս քշեցան: Տաճկական ուժերի թունաւոր շունչը վերացաւ ընդմիջտ. նրա դատարկ ուրուականը միայն մնաց, մի գրօջ Սիւրբայում՝ իբրև նշան դարաւոր տիրապետութեան:

Կրէտէն էլ անջատեց... այն գարշելի մարմնից, որի ամբողջական գոյութիւնը մահ է ազգերի համար եւ որի անդամաւորը միայն կեանքի ու քաղաքակրթութեան գրաւական է: Շատ չի անցնիլ եւ կը տեսնենք, որ դարաւոր գժոխքից ազատած այդ նահատակ կղզին ևս կը ծէ ու կը բարգաւաճէ:

Ի՞նչ սովորեց արգեօք Երլտգի բռնակալը: Նա Կրէտէի վրայ երբեք հաշտ աչքով չնայեց. նրա ազեր սանքներն ու բողոքները լսել չուզեց: Նա մէկ հոգս միայն ունեցաւ՝ արիւնի ու սարսափի քաղաքականու-

Թեամբ միշտ աւելի խորացնել անդունդը տիրողի ու հպատակի միջև. նա մէկ նպատակ միայն ունեցաւ՝ յաւեր-
 ժացնել իր մահացնող լուծը: Թշուառութիւնը յուսահա-
 տութեան հասցրեց բնակիչներին, յուսահատութիւնը՝
 զէնքի: Ապստամբութիւն ապստամբութեան վրայ: Գի-
 ւանագիտութեան ժամանակաւոր չէզոքութիւնը, նոյնիսկ
 աջակցութիւնը խրախուսեցին Համիդին, և նա աջողու-
 թեամբ հանգրեց մի քանի անգամ ապստամբութեան
 հրդեհը կղզիում: Նա կարծեց, որ հանգրեց: Եւ կար-
 ծեց, որ դիւանագիտութիւնը միշտ խրախուսող պէտք
 է լինի իր վայրագ քաղաքականութեան: Արպիսի ինք-
 նախաբեկութիւն: Ծխացող հրաբուխը նորից ժայթքեց
 — և վերջին անգամ: Յունաստանը սպառնալից ձայ-
 նակեց Կրէտէի յուսակտուր հաւարին, և դիւա-
 նագիտութեան միջամտութիւնը վճռական եղաւ: Գէր-
 մանիայի, Աւստրիայի ինտրիգները վիժեցին: Չորեքպետ-
 եան համերգը, չնայած ներքին մշտակայ հակամարտու-
 թեան և ոմանց բարձրագոյ ծանուցումներին statu
 quo-ի առթիւ, չնայած Արդիւ Համիդի յուսահատ
 ընդդիմութեան, որին սատար էր իր պաշտօնակից ու
 բարեկամ Ալիշէլմը, — չորեքպետեան համերգը յա-
 ջողեց — շատ ուշ, բայց ուշ քան երբեք — խլել Կրէ-
 տէն և ինքնավարութիւն պարգևել նրան: Միակ իսկա-
 պէս դրական արդիւնքը եւրօպական տիրահաշակի «հա-
 մերաշխութեան»...

Երբեք, թերևս, յեղափոխութիւնը այնչափ դժբախտ
 չէր եղել, ինչպէս Կրէտէի ու Հայաստանի դէպքում:
 Գժբախտ՝ այն մտքով՝ որ ահռելի զոհարարութիւնները
 երկար, շատ երկար ժամանակ ապարդիւն մնացին, չը
 հասցրին նպատակին. դժբախտ այն մտքով՝ որ դիւա-
 նագիտական միջամտութիւնը, մեր օրերում, այլևս դիւ-
 րութեամբ ու փութով չի կատարուում, ինչպէս վաղեմի
 ժամանակներն էր, — անտարակոյս, ներկայիս սօցիալա-
 կան ու քաղաքական պարագանեցի ծայրայեղ կնճռո-
 տութիւնն է դրա պատճառը:

Այո՛, բայց և երբեք, թերևս, յեղափոխութեան ան-
 հրաժեշտութիւնն ու ազատարար ուժը այնքան ակնե-
 րև դուրս չէր ցայտել, ինչպէս ուղղակի Կրէտէի հար-
 ցում: Արքան արեան գետեր հոսեցրեց այդ կղզին իր
 ազատագրական կռիւների միջոցին, քանիցս չարաչար
 ջարդեր կրեց, — Կրէտէի հայրենասէրները մեր տխմա-
 րամիտ ազգայինների պէս չդատապարտեցին յեղափո-
 խութիւնը. քանի՛ անգամ դիւանագիտութիւնը խաբ-
 խբեց ապստամբներին, քանի՛ անգամ ապստամբութիւ-
 նը խեղդեց և կրէտական հարցը թաղած հոչակե-
 ցին, — Կրէտէն անսասան մնաց իր վէրքերի մէջ. նա
 մնաց միշտ զինւած, կազմակերպւած և ապստամբ: Նա
 երբեք չկորցրեց հաւատը դէպի զէնքի ու յեղափոխու-
 թեան ուժը, և այդ հաւատով էր, որ յաղթանակեց:

Ամէն բան վերջացած է. իզուր ողորդական ճիչեր է
 արձակում Համիդը. իզուր է նա աղերսում ցարին՝

խանգարել Գէորգ իշխանի հաստատումը: Նա ինքը
 գիտէ, անշուշտ, որ ցարը անդրդուելի է իր որոշման
 մէջ. նա գիտէ նոյնպէս, որ այդ ցարը ներողամիտ աչ-
 քով չէր նայում Ալիշէլմ II-ի հետ փոխանակած իր
 (Համիդի) շատ ջերմ զգացմունքների և Գերմանիային ա-
 րած շնորհումների վրայ: Բայց հէնց դրա համար էլ պէտք
 էր դիմել ցարին: Պէտք էր սիրաշահել այդ ահաւոր
 հակառակորդին, որը արտաքուստ շոյում է նրան, իսկ
 ներքուստ զարհուրելի դաւեր է նիւթում Օսմանեան
 կայսրութեան ամբողջութեան դէմ: Դրա համար էլ
 պէտք էր դիմել յատկապէս ցարին. ո՛չ Անգլիային (նը-
 րանից ակնկալութիւն չունէր), ո՛չ Ֆրանսային ու Իտա-
 լիային: Նա ուզեց դրանով հասկացնել իր հիւսիսի
 «բարեկամին», որ նա միակ իրաւարարն է, իսկ մնա-
 ցածները — զանցառելի քանակութիւն. նա ուզեց ցոյց
 տալ նոյնպէս, որ ցարը մնում է տակաւին իր ճշմա-
 րիտ հովանաւորը, որը այնքան ճգնաժամերից ազատել
 է իրեն ու զեռ պիտի ազատէ:

Եւ քաղաքավարի մերժում ստացաւ: Օր աւուր ա-
 ւելի և աւելի համոզուում է սուլթանը, որ ցարերի
 հովանաւորութիւնը — նոյնիսկ իր կեղծ դիմակով —
 վաղանցուկ է ու խախուտ: Նա տեսնում է արդէն, թէ
 ինչպէս մերթ ընդ մերթ հրապարակ են գալիս ցարիդ-
 մի գիշատիչ սխորժակները, նրա հարազատ տրամադ-
 րութիւնը Թիւրքիոյ ամբողջութեան նկատմամբ:

Սկէպտութիւնը ցարի վերաբերմամբ չէ միայն: Մի
 պահ հաւատաց նա Ալիշէլմ II-ի հզօր աջակցութեան.
 բայց իրողութիւնները այդտեղ ևս յուսախաբ արին
 նրան: Ալիշէլմի դիմադրութիւնը չփրկեց Կրէտէն, իսկ
 նրա օգոստոսափառ պայքելութիւնը ոչ մի տարակոյս չթո-
 ղեց, որ Գէրմանիայի պետը սոսկ շահագործող վաճա-
 ոականի ակնոցներով է նայում սուլթանի և նրա լայ-
 նատարած սեփականութեան վրայ:

Յոյսերը խաւարում են: Սակայն պէտք է դարձեալ
 աղերսել, քծնել, պէտք է բարեկամանալ այս կամ այն
 հզօրի հետ: Այդտեղ է գրաւականը իր կայսրութեան
 ամբողջութեան: Այդտեղ է և ապաստանը ներքին յե-
 ղափոխական փոթորիկներից: Պահպանել statu quo-ն
 հզօրների թւերի տակ մտնելով՝ երբեք պահպանել նը-
 րան խելացի ու արդարամիտ կառավարութեամբ: Խե-
 լացի, արդարամիտ... այդ բառերը միանգամ ընդմիշտ
 վտարւած են խելագարի բառարանից:

Կրէտէն էլ խլեցին ձեռքից. զգաց նա արդեօք փաս-
 տերի անողորմ ճակատագրականութիւնը: Մտաբերեց
 ապստամբութիւնների ու ազատութիւնների եղերական
 շարքը սկսած դարու 20-ական թւականներից: Հաս-
 կացա՞ւ արդեօք, որ յեղափոխութիւնը իր ամօթալի
 տիրապետութեան, իր դժոխային սիստէմի անբաժան
 ստւերն է, որը պիտի հալածէ իրեն մինչև գերեզ-
 ման... Կրէտէն կորցնելուց յետոյ, այժմ նա մէկ բաղ-
 ձանք ունի՝ մնացածը պինդ պահել. հայկական, մակե-

դժնական հարցերը չբորբոքին: Եւ դրա համար աշխատում է նա: Պէտք է փող հնչեցնել ամէն կողմ, որ դրուծիւնը խաղաղ է Հայաստանում, Մակեդոնիայում. և նա անում է այդ: Պէտք է ցոյց տալ միաժամանակ իր պատրաստականութիւնը՝ ուէֆօրմներ մտցնելու, և ահա նա հռչակում է, որ ուէֆօրմների յանձնաժողովը պատրաստ է ու շուտով կ'ուղևորւի դէպի Մակեդոնիա. յետոյ... գուցէ և Հայաստան: Պէտք է մի ուրիշ աշխատանք՝ ամէնից աւելի կնճռոտ և անշնորհակալ. պէտք է ներքին բողոքող տարրերը լռեցնել: Եւ նա ձգտում է այդ անել ումանց՝ (յեղափոխական շանտաժիստներին) կաշառքի միջոցով, ուրիշներին՝ բարենորոգման հաւաստիքներով:

Սակայն, «ամէն բան խաղաղ է» յայտարարելով՝ դրուծիւնը չխաղաղեց: Եւ եթէ Արդիւ Համիդը խելագար է, Եւրօպական դիպլոմատիան շատ լաւ գիտէ այդպիսի լաւատես ծանուցումների հետեանքը: Ամէն բան խաղաղ է այն, եթէ միայն այդ խաղաղութիւնը կայանում է ներքին անդադրում խմորման մէջ, մի երկրում՝ ուր անհնարին թշուառութիւնը միմիայն մէկ ելք է փնտռում — դաւադրութիւն: Յուսահատ ժողովուրդի այդ թունալից տրամագրութիւնը թող լաւ կընեն, և թող պատրանքներով չօրօրեն իրենց: Յեղափոխութեան հետ խաղաղ շատ վտանգաւոր է: Նրա դէմ արշաւեց սուլթանը իր ամբողջ սպառազինութեամբ և անզօր եղաւ յաղթահարելու: Ահռելի հալածանքներ, բանտ, կախաղան, թնդանօթ — և լիակատար ֆիասկօ: Համոզուեց արդեօք: Զգաց արդեօք հայ ժողովուրդի ծովածաւալ արեան գնովը իր վաստակած յաղթանակների ունայնութիւնը... Այո, թէ ոչ — բայց նա գնում է աւանակի յամառութեամբ իր գծած ճանապարհով՝ երկիրը փաշայական կամայականութիւնների մատնելով, ազատ հաղորդակցութիւնը կաշկանդելով, կեանքը թունաւորելով, անմեղ քաղաքացիներին բանտերում փտեցնելով, յեղափոխականներին պարապ խոստումներ անելով, Եւրօպայի հասարակական կարծիքը խաբխբելով գնում է խելագարը իր նախկին ոճրագործ ուղղութեամբ, մերթ մէկ զօրաւորի, մերթ միւսի ոտքերը լիզելով, առանց երբեք ըմբռնելու, որ այդ կերպ տեղաբար իշխել չի լինի, որ քաղաքական հանգամանքները փոփոխական են, որ հայկական հարցը ևս ժամանակաւոր մոռացութեան ալիքներից դուրս պիտի լողայ անհրաժեշտաբար. որ յեղափոխական կազմակերպութիւնը՝ պարտքի գիտակցութեամբ բարձր, շատ բարձր իր ստորաբարձ հակառակորդից՝ երբեք չի կաշառուիլ սին խոստումներով և մի նշանախեց չի զօհիլ իր պահանջներից:

Նա չի խոնջում: Նրա աշխատանքը միշտ բացասական է, երբեք դրական: Երբեք բարի ու անկեղծ նախաձեռնութեան մի նշոյլ: «Բարենորոգում» բառից գարշում է խելագարը, ինչպէս ջրից գարշում է կատաղած շունը: Տէնօր — կարմիր ու սպիտակ — այս

է նրա գերագոյն պետական իմաստութիւնը: Եւ դեռ հաւատում է նա — Ալլահը հաստատ պահէ նրան այդ մոլեռանդ հաւատի մէջ — որ կաշառքներով, խաբէութիւններով, ոստիկան-լրտեսական սիստէմով կը յաջողէ վերջապէս զինաթափ անել հայ յեղափոխութիւնը ու խաչ դնել հայկական հարցի վրայ:

Խաբուսիկ պատրանք:

ՊԱՐՏՔԻ ԶՈՂԵՐԸ
ԻՆՇ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒՍԸ ՍԱՄԱՍՏՈՒՍ

(ՆԱՄՆԱ ՊԱՐՏԱԾՈՒՐԸ ՍԱՄԱՍՏՈՒՍԻՆ)

1/13 նոյեմբեր 98

Շատ բան էր կատարւած, շատ բան էր տեսնւած Պարսկաստանում, բայց այն դէպքի նմանը, որը պիտի նկարագրեմ, չլուած երևոյթ է մեզ մօտ: Մի երկիր, ուր կաշառքը միակ օրէնքն է, մի երկիր, ուր իշխողների ու դրանց ստորագրեալների տրամագրութիւնը միշտ փոխարինել է որ և է կարգ ու կանոն, բնականաբար, չէր կարող զարմացնել ոչ ոքի իր ամէնօրեայ վայրենութիւններով. բայց ներկայ դէպքը, կրկնում եմ, նոյն իսկ Պարսկաստանում անզուգական է:

Հոկտեմբերի 10-ին Տաճկաստանից անցնում են Սալմաստ 10 հոգի տաճկահայ կտրիճներ, որոնք որոշ պատճառներով ստիպւած են լինում բաժանուել Վասպուրականում գործող դաշնակցական մի զինակիր խմբից: Կամենալով ապաստանուել Մահլաճ գիւղում, նոքա մշտնում են մի տեղացու տուն: Գիւղացիները, իմանալով այդ մասին և երկիւղ կրելով գիւղատէր և դատաւորի օգնական Հաջի-խանից, պահանջում են եկուր հիւրերից անմիջապէս թողնել գիւղը: Վտանգաւոր և դժուար ճանապարհներով անցած խմբակը՝ քաղցած, յոգնած և տկար՝ խնդրում է գիւղացիներից մի-երկու օր ժամանակ տալ իրենց, միայն փոքր ինչ հանգստանալու, կաղուղուելու համար, և հեռանում է գիւղից դէպի այգիները, պատսպարուելու մի հնձանում: Գիւղական մի քանի ցեցեր, սակայն, դրանով էլ չեն բաւականանում և դրանցից մէկի, այն է աղա-Ջաքօյի առաջնորդութեամբ դիմում են Խոյի և Սալմաստի դատաւոր Զարգամ-իւլ-Միւլքին, խնդրելով ձերբակալել հայ յղաչաղներից՝ և խստիւ պատժել նրանց: Զարգամ-իւլ-Միւլքը գիւղական մատնիչների և Հաջի-խանի առաջնորդութեամբ իսկոյն ուղարկում է հայերի վրայ մի վաշտ զօրք երկու թնդանօթներով և 300 հոգի էլ հարեան Սոմայի քիւրդ զինուորներից: Խիստ հրամաններ ստացած այս խուճանը շրջապատում է հայերի գտնւած այգին և անմիջապէս սկսում է հրաձգութիւն հրացաններից և թնդանօթներից: Դէպքը տեղի է ունենում հոկտեմբերի 13/25-ին, երեքշաբթի լուսադէմին: Դժբախտ զինակիրները, միանգամայն չկամենալով որ և է համարձակ քայլով վնասել տեղական հայ ժողովուրդի շահերին, այսինքն երկիւղ կրելով որ մի գուցէ գիւղը տուժի, եթէ իրենք դիմագրութիւն ցոյց տան կառավարութեան՝ դուրս են գալիս զօրքի առաջ և յայտարարում, որ իրենք երբեք

պարսկական կառավարութեան դէմ ոչինչ չեն ունեցել, որ հետեւեալ ունեցած զէնքը միայն աւազակների զէմ ինքնապաշտպանութեան համար կարող է ծառայել, և որ զէնք կրելում նրանք յանցանք չէին կարող տեսնել, քանի որ Պարսկաստանում սովորաբար արգելած չէ այդ բայց եթէ, այնուամենայնիւ, կառավարութեան կողմից կայ իրենց վերաբերմամբ որ և է կասկածներ, ապա նրանք կը յանձնեն իրենց մօտ եղած հրացանները և իրենք էլ անձնատուր կը լինեն:

Ահա այն սոսկալի րօպէն, երբ զուգահիւսում են արևելեան բարբարոսութիւնը մի կողմից և ժողովրդասէր զինակիրների անձնազոհութիւնը միւս կողմից... Թէև մինչ օրս Պարսկաստանում հայերի և առհասարակ քրիստոնեաների վերաբերմամբ յայտնի չեն սպանման կամ գլխատման պատժի դէպքեր, բայց այս անգամ, իբր պատասխան ինը հերոսների մեծահոգութեան՝ զօրքը նրանց սրի ճարակ է դարձնում, իսկ Հաջի-խանը՝ ընկածների գլուխները անմիջապէս կտրել տալով՝ ուղարկում է Ջարդամին...

Դէպքի տպաւորութիւնը... բայց չէ, թող այդ մասին վկայեն այն գարշելիները, որոնք ծնկաչոք աղաչում էին Ջարդամին և Հաջի-խանին ազատել իրենց՝ հայ յղաչադներին: Այդ յուզանքն իսկ այսօր դիւահարեւել, ապշել, բարոյապէս սպանել են իրենց մատնութիւնների հետևանքները տեսնելով... Խեղճ անց կը կանցնեն արդեօք նրանք էլ իրենց վիզը, հետևելով իրենց նախահոր Յուզային, թէ պիտի խեղդուին ուրիշներից... Առ այժմ աղա-Ջարդայի մասին միայն յայտնի է, որ նա իր կնոջ և աղջկայ հետ իր բարեմիտ հպատակութեան համար վարձատրել է մահով...

Չենք կանգ առնիլ երկար նաև դէպքին հետևող իրողութիւնների վրայ: Ինչքան և դրանք մէկը միւսից ճնշող, մէկը միւսից զազոելի, յուզիչ ու ծանր լինեն՝ այնուամենայնիւ նսեմանում են իրենց խօսքի մասին թեանը զօհ գացած ինը երիտասարդների եղբրական վախճանի առջև...

Երբ Սալմաստի փոխանորդ Խաչիկ վարդապետը պահանջում է Ջարդամից նահատակածների գլուխները, նա պատասխանում է, որ յանձնել է տաճիկ կառավարութեան, մինչդեռ դէմքերի լուսանկարները առնելով՝ նա թաղել է տալիս գլուխները Քէօհնա-Շահար գիւղի փողոցներից մէկում: Այդպիսով Խաչիկ վարդապետին յաջողում է ստանալ միայն սպանւածների դիակները և թաղել Մահլամի գերեզմանատանը:

Այս բոլոր եղելութիւնները պանազան առիթներով և պանազան տեղերում, իհարկէ, բողոքներ և միջամտութիւն յարուցին. Խաչիկ վարդապետ Դատեանը, Ատրպատականի առաջնորդ Այվատեան եպիսկոպոսը, անգլիական և ռուսաց հիւպատոսները Ամիր-Նիզամին և Սադրազամին դիմեցին: Խաչիկ վարդապետին թող տւին իր պաշտօնատեղին վերադառնալ, Հաջի-խանը պաշտօնանկ եղաւ: Աւրիշ ոչ մի առանձին հետևանք: Ջարդամը իբր Սալմաստի և Խոյի դատաւոր՝ առ այժմ Խոյ քաղցեց... Աւելացնենք արդեօք, որ անգլիական ընդհանուր հիւպատոս Աուտի միջամտութեամբ պարսից և քիւրդ զինւորների ձեռքով սպանւած 9 նահատակների գլուխները յետ տւին հայերին և հոկտեմբերի 30-ին կատարեց նրանց կրկնակի թաղման տխուր հանդէսը...

Վերջացնելով ներկայ թղթակցութիւնը՝ կ'աշխատենք

հետևեալ անգամ տալ նահատակ մեր ընկերների պատկերները և նրանց վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ: Թող վառ մնան մեր սրտերում նրանց յիշատակը և բազմապատկի մեր արիութիւնն ու եռանդը մեզ սպասող նորանոր դժուարութիւնների հանդէպ...

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

6/18 նոյ. 98.

Այժմ օր կայ որ առինք նոր լուր մը, Բաղէշի կոտորածը. պատճառն է գիւղի մը մէջ քիւրդի մը սպանութիւնը հայերու ձեռքով: Քիւրդերն ու կառավարութիւնը կ'ուզեն մարդասպանները. գիւղացիք տունները կը քաշին ու զէնքով կը դիմադրեն: Պալատ եկած հեռագրի մը վրայ, հրահանգ կը տրուի յպաշտպաններուն՝ գործ չձգելով, կառավարութեան միջոցաւ վերջացնել ու եղած տեղը մարել: Դէպքը կատարած է ըստ այդ հեռագրին 20 հոկտեմբեր, երկուշաբթի: Բայց հակառակ այս հրամանին չորեքշաբթի օր գիւղէն քաղաք կը տարածուի գործը. հոն ալ հայերը կ'ամրանան տուններու մէջ և կը դիմադրեն մինչև հինգշաբթի, որ ատեն կառավարութիւնը կը սկսի ալ տունները կոխել:

Pester Lloyd-ին Պոլսի թղթակիցը — որ ընդհանրապէս լաւատեղեակ կը թւի — 9 նոյեմբեր թւին մէջ հետևեալ լուսաբանութիւնը կուտայ այդ նորոգ ջարդի մասին պտըտող շուկաներուն:

Յիշելով այդ գաւառներու մէջ հանրածանօթ յեղափոխական Սերոբը ձերբակալելու համար ոտքի հանւած համիդիէ գումարտակներուն հայ գիւղերուն մէջ կատարած խժոժութիւնները (Խլաթի սարսափները տես յ'Իրօշակ" № 9), կ'աւելցնեն.

«Կը թւի թէ այս հալածանքներուն (համիդիէներու առթիւ տարածած են այս օրերս վերը փշուած լուրը (ջարդի) Բաղէշի մէջ: Այնքան մեծ էր ահու վախը (panique) որ բոլոր խանութները փոցեցին, եւ մինչև անպամ օսմանեան լուր մը կըսէ թէ հայ խանութէ մը իբր թէ ատրճանակի հարւած մը մեկնած լինի, ուղղած քաղաքին զլիսաւոր միւսիւրման իւլէմաներէն մէկուն զաւկին դէմ եւ սպաննած զան: Հակառակ այս միջադէպին, վային յաջողք է մտքերը խաղաղիլ եւ գործերը վերստացել են իրենց բնական ընթացքը: Մինչև այս պահս հանդարտութիւնը կը սիրէ քաղաքին մէջ եւ շրջակաները:»

* * *

Այս օրերս նորէն մեծ իրարանցում կայ. պատրիարքը երկու շաբթեան մէջ 3-4 անգամ պալատ կանչուեցաւ: Խստութիւնները շատցած, հսկողութիւնը աւելցած, զգուշութիւնները — իրենց խելքով — ծայր աստիճանին հասցուցած, վաճառականներու երթևեկութիւնները զադրած, մնացած պանդուխտներու արտորը վերսկսած է: Պատրիարքը կանչուած է պալատ բացատրութիւն տալու սահմանագլխի մօտ տեղի ունեցած ընդհարումներու մասին հայ յեղափոխականներու և քիւրդ ու թիւրք զինւորներու միջև: Պատրիարքը այս անգամ սիրտ կ'ընէ, կ'ըսեն, պատասխանելու թէ ինքն առաջուց այնչափ աղաչած էր գէթ պզտիկ յշնորհ՝ մը ընել այնչափ տառապանքներու փոխարէն, բայց իր ձայնը անլսելի մնա-

ցած էր. կառավարութեան այդ ընթացքին շնորհիւ, ինքը կորսնցուցած է թէ իր հեղինակութիւնը և թէ այն համակրութիւնը որ առաջին օրերուն մէջ կը վայելէր, երբ պալատէն ստացած իր հաւաստիքներուն վրայ յենւած, ինքն ալ յայսեր կուտար իր ջարդուկոտոր եղած հօտին:

* * *

Ելլողին համար նոր գլխուցաւ մը եղաւ քիւրդ շարժումի մը մասին եղած տարտամ կասկածները: Առիթը տւաւ կահիրէի մէջ «Քիւրդիստան» անուն թերթի մը հրատարակումը, որ իրեն նպատակ դրած էր, քաղաքակրթութեան նշոյլները մտցնել իր վայրենի հարեանակիցներուն կեանքին մէջ: Թերթին հրատարակիչն էր հանրածանօթ Պետրիսան պէյին մէկ օրդին, որ վերջերս իր հիւանդութեան պատճառով հարկադրեցաւ Պոլիս վերադառնալ:

Բայց հոս հաշտ աչքով չէին կրնար նայիլ այդպիսի ձեռնարկի մը, թէև նոյն այդ բառը՝ «Քիւրդիստան» իրենց հնարածն էր «Հայաստանը» մտցնել տալու համար: Ընդնշմարեած անջատական ձգտումի մը տկար նշաններուն շարունակութիւնը համարեցան ատուք, և առաջին օրէն կառավարութիւնը բանտարկել տւաւ Պէտրիսան պէյին բոլոր օրդիները, կասկածելով մանաւանդ իրը համիրիներու ըմբոստութեան գրգռիչներ: Կը լըսենք թէ անոնցմէ մէկը միայն մնացած է հիմա ընդհանուր բանտը, միւսները արձակած են: Այդ մէկին հետ շատ խստութեամբ կը վարեն, թէև ինքը բնաւ բանի տեղ չի գնել:

Վիճելի մի այցելութեան ատեն, բազմաթիւ կասկածելի համարեցաներու հետ բանտարկեցին նաև քիւրդ մը, Անգոլուի երկաթուղիներու Հայրար փաշայի կայարանին բեռնակիրներու պետը, քիւրդերու հետ յարաբերութեան կապ եղած լինելու ամբաստանութեամբ: Եւ հետևեալ օրը քրտորեցին զինքը:

Քիւրդ շարժումի մը լուրերը և ամէնէն սովորական դէպքը սարսափ կը պատճառէ պալատը: Բարձրաստիճան թիւրք պաշտօնատար մը, երբ կը կարդայ Գրօշակի № 6-ի մէջ հրատարակած քիւրդ բժշկին նամակը կը բացագանչէ.

— Եթէ յեղափոխութիւնը քիւրդերուն մէջ ալ ծաւալի, ալ ամէն բան լմնցած է մեզի համարն:

* * *

Վերջերս Եօզղատի մօտ հետևեալ դէպքը պատահած է որ աւելորդ կերպով կ'ապացուցանէ թէ կարգապահութիւնը որ աստիճան կը տիրէ օսմանեան վարչութեան մէջ:

Եօզղատի միւթէսարըթութեան ենթարկւած Ուզունլու աւանին բնակիչները ժամանակէ մը իվեր կը մտադրեն իրենց գաւառակին տեղական վարչութիւնը — որ Պողազլեան աւանը կը գտնուի — իրենց մօտ փոխադրել: Այս նպատակով 250 ոսկի կաշառք կուտան Եօզղատի միւթէսարըթ Էտիպ էֆէնտիին: Վերջինիս բոլոր ջանքերը սակայն ապարդիւն կը մնան. Պողազլեան կ'ընդդիմանայ: 2 մոնանք ըսել որ այս վերջինս մօտ 18,000 հայ և 15,000 թիւրք բնակիչ ունի: Այդ ընդդիմութեան վրայ, միւթէսարիֆը կը դիմէ Էնկիւրիի վալիին, խնդրելով որ արտօնէ զինքը զինւած ուժով երթալ

Պողազլեան ընդունել տալու նոր տնօրինութիւնը: Աւանի երկիւղ կրելով թէ ծանր հետևանք կրնայ ունենալ գործը, կը զանայ այդ արտօնութիւնը: Էտիպ էֆէնտիին բանի տեղ չի գնել վալիին արգելքը և վերցնելով հետը 150 զինուոր ու ոստիկան կ'երթայ Պողազլեան: Ինչպէս միշտ եղած է այրօրինակ պարագաներու մէջ, թիւրք կիները առաջ կը նետուին իբրև դիմադիրներ, և քարեր կը նետեն զինուորականի մը վրայ: Էտիպը կը կատղի և հրաման կուտայ անխնայ հարածել բնակիչները: Մօտ 50 հօգի հայ ու թիւրք կըսպաննեն, և 100 ալ կը վերաւորին:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

ԿՐԷՏԱՑԻՆԵՐՈՒՆ, ԻՐԵՆՑ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

20 ՆՅԵՄԲԵՐ 1898

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԿԱՆԷԱ

Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինն կողմէ պաշտօն ունինք ձեզմէ ինչոք, որ հաճիք հաղորդել Կրէտէի քաղաքի ժողովրդին Դաշնակցականներուն ամէնաբուն հիացման եւ ամէնախորին համակրութեան հաւաստիքները, այն ռուսացանական ծիղերուն համար որով ինք յաշտեցաւ ատուի լուծը կորտակել: Ինչպէս նաև անոնց ջերմաշնորմ մաղթանքները տառապանքով եւ տննչանքներով իրենց եղբայրներուն երջանկութեան եւ բարգաւաճման համար, արդարութեան եւ ազատութեան հովանիին տակ:

Կեցցէ ազատ Կրէտէն, որուն օրինակը ուժ պիտի շոյ հայերուն իրենց մուկին պայքարին մէջ, կեցցէ յեղափոխական ռզմն:

ԽՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԳՐՕՇԱԿ»-Ի

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ծ Ո Ւ Ր Զ Ը

Գերման կայսեր Պոլիս այցելութիւնը, փատիշահին հետ պազտուրը, շայտութիւնները, իր երեսպաշտութիւնները, ծակաշտութիւնները, Ելլողի ծունկաններուն մէջ թեթեւալու ճանները, ինչպէս որ կըսպատէր, ծիծաղ ու ապշուածիւ պատճառներին քաղաքակիրթ աշխարհին մէջ:

Խալիֆան առումն եղաւ իր աղբորակին. եւ ոչինչ ինչպեց շքեղ կայսերամուկն քէֆը տեղը բերելու համար. մեղապարտ կամ մահապարտ շարագործի մը պէս, որ իրմէ ուժովին պաշտպանութիւնը սիրաշահելու համար մինչև անտերելի զոհողութիւններ յանձն կ'անէ. եւ խորին սփոփանք մըն ալ կըզգայ երբ դերը ունեցող մեղաակից մը, ըլլայ թագակիս կամ ուրիշ անհատ մը, ժպիտով մը կը մօտենայ իրեն, կը սեղմէ ձեռքը, մանաւանդ չպզգալով շրջած կամ թաց արիւնի սեւ վագուքներէն, տկանընիվար կամաց մը կը փսփսայ «նորք ալ մի ընտր, սա աշխարհս ասանկ կը բալէ»:

Շոշոկ ու հուայսիայը քայգէրը, ընտրիւնով վիթխարի զօշաքաղ մը, Պոլիս այցին ոչ միայն իր ակոխ ու ոտքի վաստակը առաւ, այլև շատաց արեան լիկերու (կէօլ) վրայէն Համիդին համար ոտմաքար մը դնել ապահով տեղ հասցնելու համար գտն. բայց «սմանակաւ քարեկամ» յորջորջը, գոր փուխ սրտով մը շոյլեց իր ոճրագործ պաշտօնակցին, բաւական է երկու կայսերաբու բարոյական կազմելութիւնը վեր հանելու համար:

Ամէն բան ներքի է Գերմանիոյ կայսեր համար, որ հոգեթէտ զրուծեան մը մէջ կը հաւատայ թէ ինք տիեզերքի կորհրդին մարդեղութիւնն է, երբ մուծակները մինչև ազամէջ վեր հանած, լօտօզ մը կը տնկի Քազիթի հոգեգնայլու մէջ սուլւած կըզգայ թէ մեր վճիտ ու տկար մուրախը իր խթանէ գար-

շապարհն ներքի կը դողդայ, ինչպէս դժոխքին սանդարամտ-
նորը:

Անդաւան հոգեպաշտ մը խուժ քնազդներով, աստուծա-
պաշտ մը արիւնային անոպայ իղէալով, ծառախօս թմբուկ մը
յայտնութեան նհանգին պէս բերնէն կրակ ու բոց ժայթքող,
վերջապէս քաղաքական լոյս մը որուն համար նպատակը մի-
ջոցը կ'արդարացնէ: Այդ «նպատակը»... չէ այն վսեմ, ա-
նուշ իղէալը, որ ամբողջ մարդկութիւնը կը գրկէ, որ կը սի-
րէ աշխարհի երանութիւնը, եւ կը տննչայ որ աշխարհ սիրոյ
փեթակ մը ըլլայ: Վիճելով կեանքին մէջ մոծակի հոգիի թռիչ
մը չէ ունեցած. եւ երբեք ալ մարդկային սիրտը թրթռացող
ազտիկ մեծութիւն մը չափոյ ունենայ: Իրաւ է կրածիշտ-քա-
նաստեղծ է, քայց չէ որ ներքոն կըզգուշացնէ մեզ կրածիշտ կայս-
րերէն: Անցած տարի իր բանդագուշ ծառերուն մէկուն մէջ սա-
պէս բան մը կ'ըսէր. «Անանկ մը կ'ուզեմ որ Գէրմանիոյ աշ-
խիւները ու մանչերը իրենց աշխատանքէն վերադարձին խն-
դում ու ազատ երգերով արծազանգ տան Գէրմանիոյ լեռնե-
րուն»: Խոնդում ու ազատ երգեր... հողազնոյին ափ մը
հողին վրայ... լացեր ու կողկողանքներ աշխարհի միւս մա-
սերուն մէջ... այն է եղեր իմաստասէր Գէրմանիոյ իղէալը:
Այս է աշխարհաշրջիկ քայգէրին առած արքայական կրթու-
թիւնը, զի, չենք նահանգի: Ժծել, կաշոկող զգել անտէր ազ-
գերուն վրայ կամ նահատակել զանոնք աստուծային պատե-
րան մը գտնելով այդ ոճրին մէջ, եւ գէրմաններու փորը հաս-
ացնել... ինչ տխուր ու պատիժ արարածներ կը ծնին սա
թագուհիները...

Մինչեւ եղունգին ծայրը մոլեկան քրիստոնեայ Վիճելին
համար ամէն բան շուր կը վերցնէ. իր բանականութիւնը վե-
րին ներշնչումն է:

Սուլթան չամիդ ատանկ այլաճամուկ եւ հրաշագործ մարդ
մը կը փնտռէ որ իրեն ծայէր «Արի, չամիդ, եւ ուրախ լըր»:
Վիճելը չորտանէն վագեց Պուլիս, միտարքէ շարով մը սրբեց
չամիդին սեւերեք ու թախիծը, աղմեց անոր գոռելի ծնոքերը,
ճառեց, ծափոտեց, դագիններու կնակը ծծեց, սրաբեցաւ...
հորիններուն երկրին մէջ, վերջապէս հասաւ նպատակին... քա-
նալ տաւ Ալի պապայի զանձերը: Վիճելին փաղաքուշ շոյ-
անքներուն ու քծիքներուն դէմ չամիդ ներսէն մեշիկ կը
պատասխանէր

man delights not me 1)

Վիճելով աւելի դրական, որքան զգացմուն մարդ, յիշեցուց
թերեքներուն թէ ինք իր մեծ պապին թիւրքիոյ հանդէպ ունե-
ցած մասնաւոր սիրելութեան մեծան կը հանդիսանայ: Բայց
քայգէրը եթէ պատմութեան մէջ քիչ մը ետետ երթար աւելի
հզօր փաստ մը պիտի գտնէր տեւտուն եւ թաթար ազգերու
խնամութեան: Նիքէլունգի գեղանի ու անսիրտ Բրիմհելի
ամուսնութիւնը Ատիլայի հետ, որուն ղեկած զանձերը Վի-
ճելը գէրման հոտառութեամբ Աէրայ Պուլքուի ամբողջներուն
մէջ կը գտնէ այսօր:

Օգոստոսիտո հերերը, Էրիկինի, ը'հ ընելու չափ շալկե-
ցին օսմանեան հարստութեան շքանդ գոհարները, փառքի ու
արիւնտո անցեալի մեծաշուք յիշատակները — որոնք օտար եր-
կի մը մէջ ազգային պարծանքը ու գուրգուրանքը պիտի կազ-
մէին — ու Բէրլին կրեցին:

Երկու միլիոն ոսկի արծած է այդ մոխիրի վրայ նստե-
ցող հերքազնացութիւնը, — յունական պատերազմատուգանքին
կէսը: Նետ մը վառող շարձակած, գինւորի մը թելը շնոռած,
երկու օրան մէջ երկու միլիոնին վրայ թուխ նստել, գէշ
վաստակ չէ: Մինչդեռ լրբօրէն կողպուած ու շարդուկտոր
հայերուն իրաւունքը ետ դարձնելու համար արիւնտո դաշոյնը
կը ցցնէ: չապա հէգ, տնանկ ժողովուրդը ինչքն չի քաշեր
այժմ տուրքի երեսէն: Կարծէ՛ երկիր մը լացնել անխիղճ
մարդու մը համար, որ հիւսիսի խոնաւ մշուշներու մէջէն պիտի
քահքահէ կենդանարար արեւի մը տակ արիւն լացող ու անօթի-
քամ քարմիր ժողովրդին վրայ:

Օսմանցիները իրենց բոշա հերը մօտէն ծանցան. բայց
այդ սեւաշքերու սիրահար ազգը, ծէնէրի երանելիներուն պէս
աշք ունի չի տեսներ, բերան ունի չի խօսիր, սկանշ ունի չի լսե-
թիւրքերը, կը գրէ թղթակից մը, անօթի բերանին հոտած, սիրտ
չունէին «կեցցէ՛ պողալու: Բայց ոստիկանները ամբողջ հրելով
մշտելով կըստիպէին «եաշապն պաղքատանա, էշէք»: Ժծող այդ
բնասած ցոյցնդունելութեան ատենն էր որ Գրէտէի մէջ
միսսիւմաններ կը կախէին եւրօպացի գինւորներ սպանած Բե-
լաշուն համար: Բանի մը օր վերջը ծամիներու ղններուն վրայ
թղթեր փակցւած էին, եղած անօգուտ ծախքերուն դէմ գայ-
րոտ զանգատներ ընելով:

Վիճելը խիպ շունի. այն գողերէն է, որոնք ուրիշին տունը

1) Մարդը զիս չուրախացնիր:

տեղը ամսելէն ետքը քնաւ չէն մտածեր տնեցիներուն խնդ-
ճութեան ու անոնց ազուլացին վրայ:

Սուլթանը շոյելէն, սօթտելէն եւ առեւտրական շնորհումներ
ստանալէն ետք, Վիճելը Երուսաղէմի ճամբան բռնեց իբր
շորրորդ միզ մը — այս անգամ արեւմուտքէն — որ չէրօղէսին
ծնոքերը լգելէ ետք, Բէթղէմէն կ'այցելէ. պայծառ աստղ մը
չէր իրեն առաջնորդը, այլ այն կարմիր ճամբան, զոր իր մի-
սիւման բարեկամը արիւնով ու զանկերով խճուղած էր: Եր-
կաթ է ձեռնիկն երով մարդը իր սուրբ շնորհներով, ինչպէս
Յիսուսը խաշ հանող գինւորները, այդ ճամբէն ելաւ մինչեւ
Կողզօթա: Սրբապղծեց Սիօնի խաղաղութիւնը, ամբարիշտ ու
կեղծ քարեպաշտութեան մը արծազանգներով: «Գէրմանացիք խա-
շի, այդ ընկերսիրտութեան նշանին հովանիին տակ
արդի մեծութեան հասած են, եւ թող աւետարանի եկեղեցիին
խաղաղութեան ոգին թափանցէ անոնց մէջ: Այսօր, ինչպէս
2,000 տարի առաջ, Երուսաղէմը պէտք է թողայ սա աղաղակով
«խաղաղութիւն երկրի վրայ»: Այսպէս փնջեց ու ղափեց մե-
սիան Վիճելով, մա'իկը... սարսափցնելու աստիճան: Խարազան
մը միայն հարկաւոր էր այդ սուտ Բրիտանիոյ խելքը գլուխը
բերելու համար: Բայց Բրիտանոս առաջնոց զգուշացուց մեզ ը-
սելով «սուտ Բրիտանոսներ պիտի ելլեն ու իմ անունովս քառ-
սուն կտոր պիտի ըլլան, մի հատարք անոնց»:

Խաղաղութիւն, է, ով մարդկային միջոսութիւն. արդեօք
չիլ արծազանգ մը ըլլալ ուզեց ցարի գէնքնկեցութեան հրաւե-
րին զբանակիր ուխտաւորը, որուն բերնէն ելածը սկանշը
չի լսեր:

Վիճելով սուրբ գերեզմանի այցէն ետք անցաւ Սիւրիս,
գէրման վաճառականներուն ճամբան հորդելու համար:

Քայգէրը խալիկութիւններով, «է ֆէ ա կ ա ն» շլացութիւննե-
րով միսսիւմաններուն տկար կողմերը գզելով, անոնց հերօս-
ներուն ղեցազնական ներքոններ կարկեղծով նպատակն էր
Սիւրիոյ մէջ անդամալուծել ֆրանսայի ազդեցութիւնը, որ տա-
քարին օրակէ մը, ազատ շունչով մը Լիբանանու մայրիները
հրճեցուցած էր:

Ծամբ-չէրիֆի մէջ, Վիճելով Յիսուսի միջաբէին վրայէն
լսելի լրաւ նորէն իր զգայախաբ ու խելառ ծառերը. թունդ
հանեց մահմէդական միլիտանտութիւնը, Սալաէդդինը դուրս քա-
շեց գերեզմանէն, եւ աշխարհի վրայ ցիլցան 300 միլիոն մի-
սիւմաններուն իր պաշտպանութիւնը խոստացաւ: Սիւրիացիներ
կարծեցին թէ Սալաէդդինի ասպետական ոգին էր որ կը
խօսէր... անապատին մէջ: Անցած են այն հրաշագործ ու միա-
միտ դարերը ուր Դամասկոսի ճամբան մարդիկ դարձի բերե-
լու շնորհս ունէր:

Այս բախտախնդիր ու ցուցամուլ այցելութիւնը, խիստ
քննադատութիւններու ու շարաշար հեղուկութիւններու տեղի տաւ.
Եթէ ուրիշ մարդ մը ըլլար ծակ մը կը փնտռէր մոտեւո հա-
մար: Ռուսիոյ արշը կըքոտեցաւ ու սկսաւ թունջունալ Վի-
ճելին դէմ, որ ոռուսական գիշերաշան աշխատութեան ղափնի-
ները կը քաղէր: Ռուս վայրերան թերթերը, արեւելեան քրի-
ստոնեաններուն հանդէպ եղի զգացումներ կը շայլեն... հնարկէ
զանոնք շարդել տալու իրաւունքը իրենց վերապահելով: Կը
դատափետնէ, կը քարոտնէ Վիճելը, որ ոռուսական շահերը եւ
դիտուները վտանգի կ'ենթարկէ:

Երեւոյթէն արեւելեան խնդիրը նոր տազնապի մը մէջ կը
մտնէ: Ռուս եւ գերման քաղաքական ու տնտեսական շահե-
րու ընդհարումի նոր էջ մը կը քայլի: Ռուսիա՛ հայոց շարդե-
րով իր ոստիկն, Անգլիոյ ամօթահարութեամբ, արեւելքի մէջ
գործունէութեան, վճռական հեռաձայն քաղաքականութեան մը
ծնունդով եւ Ասիոյ կամայապետն հոշակած էր: Խոնդը
տարբեր հանգամանք առած է այժմ: Գէրմանիան կը վստէ սուլ-
թանի թելը, զոր Անգլիա լքած էր. Ռուսիոյ յաւակնոտ-
թիւնները շիթութիւն մը կը կրնն, Լօպանովի ու Նէլիտովի
շնական քաղաքականութիւնը դառն յուսախարութեան մը կը
մատնի: Ռուսիա իրաւունք ունի արեւելք գլուխը ցատկելու:
Ռորվիտու արդի քաղաքականութիւնը շահերու ընդհարումով,
տեսակ մը փոխվրէժի ձեւը առած է. Անգլիան աչքագցելով
գէրմանական շահերուն, հետեւապէս գէրմանական ուժին թիւր-
քիոյ մէջ տեղաւորելուն, գայթազողութեան զբանիղէ քար մը
գետեղեց Ռուսիոյ առջեւ, իսկ ինք առ այժմ հեռուէն ակն-
կառնէր դիտողի մը դերը առած է:

Իսկ Վիճելը միջազգային խարխաբ ու շարուն վիճակէն
կըշտապէ առաջ զտրցնել գէրման տղաքը արեւելքի աւերակ-
ներն ու արեան դաշտերը դուրցնելով, որոնց վրայ պիտի կա-
ռուցանէ իր շէնքը «որովհետեւ ինքը եւ իր տունը յալիտնա-
կանին կը ծառայեն» եղեր:

Անգլիացի իմաստասէր-պատմաբանը, Բոթլը, կըր ծամբո-
ղութեան միջոցին Դամասկոսի մէջ մեռաւ, վրան արարեցէն
սա միամիտ ու փիրուն ասպանագիրը գրեցին:

„Գրագետը հողը կը դրի, քայց իր գործերը կը տեսնի“:
 Եթէ վիճելով ծիվերը տակէ, աշխարհի բոլոր լիզուններով
 եւ մարդակերներու լիզումով, սա տապանագիրը գրոտելու է վրան.
 „Թագաւորները գետնին տակը կը մաննն, քայց իրենց
 ւրբութիւնները աշխարհի վրայ կը մանն“:

Երկնքի մահիկը կը հեւծի եւ կը վերածնի, Օսմանեան մա-
 հիկը, անդիականի հուրիններուն սիրահար, կը քամի ու հալու-
 մաշ կը լլայ առանց վերածնութեան նշան մը եւ յոյս մը տա-
 ւու: Թող 'սեխաւար կտրի այդ չարոր մահիկը որ չկրցաւ
 մուրթուն ծամբորդներուն ուղեցոյց ըլլալ ու թշառին հոգին
 սիտիկել:

Նոյն անէծքն ու կրակը պիտի թափէ սրտի տէր ամէն
 մարդ, որ կը ծանշնայ գազան թեւք պետութիւնը, անոր մէջ
 թաւարդ արեան խանութրոզը ու սլքտագող... չար ոգին: Ա-
 նագորոյն շարութիւն մը որուն հիմնը ապառաժ տգիտութեան
 ու մուրթեան մը հիւսքերուն մէջ պէտք է մանրագնանել: Ի՞՞՞՞ մը
 թոյնը ունի ու բորենիի մը անզգայ անխղճութիւնը: Հինգ հա-
 ղիւր տարւայ ծոյլ գոյութիւն մը, որ ակտիքներուն մէջ թոյն պատ-
 քաստեց միայն. այդ թունոտ գազանային գործարանաւորու-
 թեան չէ որ պիտի սպասենք մարդկային արժանապատու-
 թեան գիտակցութիւնը: Ակոսները փետտելով, աղճակոտը ընե-
 րով միայն կարելի է այդ խառնագազանը սքեցնել. ինչ որ
 „այ ի ա ք ա ն ա յ ի ա ի“ հաւատքին պէս ըմբռնած էին արի ու
 անվհատ կրէտացիները:

Մէկ տարւան մէջ երկու քախտակեց կողմերը թօթեցին
 իրենց լուծը. մէկը Քուրան, Ասիականներու գոհարը, զոր մե-
 ոնելքուն ու մտահաւատ Սպանիան Քոլոմբոսի վզին պէս շող-
 թայով պլլած էր, եւ որուն համար այժմ կակիծ կակիծ կուլայ
 միւսը Կրէտէն, Արշիպէղագոսի գոհարը: Օսմանեան կաթաղանը
 պիտի սկսի ժանգոտիլ, ափսոս, քանի որ զան եղոտելու արեւը
 կը նւագի:

Իրենց սուրն ու հրացանը գլուխուն քարծ ընող, ու վա-
 ոտի մուխով գնում, երկու ժողովուրդներն ալ նպատակուն
 հասան, անյուսահատ ու անողոք կռի մը ղիւցազնական գոհա-
 քերութիւնով ու մարտնչումով: Երկու ջրխոց ու փլիլակ պե-
 տութիւնները խեղդեցան իրենց թափած արիւնին մէջ. եւ սպա-
 նագէն գաղտիարը, զինքը հալածող հոտած որդնոտած պետու-
 թիւններուն վրայ սաւառնեցաւ ազատութեան ծիրանի փետուր-
 ներովը թեւաւորած: Արդարութիւնը կը քալէ անոնց ետեւէ,
 որոնք լուսնկածաղկի պէս երիտնին անոր կը դարձնեն: Եր-
 կու կողմներն ալ քախտաւորեցան, որովհետեւ „Մարգրիտները
 խոզերուն առջեւ ձգելը մեղք է“:

Կրէտէն այժմ ազատ է երկնքի թռչուններուն պէս. կրկն
 կը ծլլայ, լիաթոք կը ծծէ իր սարուձորերուն մէջ վազվազ
 հովերը. ախորժով կը լափէ իր հողին պտուղն ու հացը զոր
 անօրէն քնութիւնը հարամ քրած էր:

Երբ կղզիին ազատութեան օրը աւետեցին, երբ արիւն-
 ոտը պաշխոստութիւնները բորոտ շան պէս վնասեցան կղզիէն,
 ամբողջ ժողովուրդը երանաւէտ էօֆ մը քաշեց, փոճկուն ար-
 ցունքներ թափելով անհուն ուրախութեան լաց մը, որ դարե-
 րու գոյացուցած քօքը կը վար:

Ազատեցաւ Կրէտէն, չւանին խեղդը աւելի մօտեցնելով
 սուլթանի թկին:

Ութհարիւր ապստամբներ, առջեւին ձգած անկախութեան
 դրօշակը ու օդին մէջ հպարտ թռիչներով հրեղէն սիւնի մը պէս
 կ'առաջնորդէր իրենց, թափօրով Կանէա զացին իրենց անմո-
 նաց երախտագիտութիւնը յայտնելու համար ազատարար պե-
 տութիւններու հրամանատարներուն: Ռուս ծովակալը — յուզած
 թերեւս դարաւոր պայքարի մը յաղթանակէն — շնորհաւորեց
 կրէտացիները „որոնք արժանի ցոյց տին գիրենք այդ ազա-
 տութեան“: Ապստամբութեան նախագահը Կրէտէի ժողովուրդին
 խորին զգացումները յայտնեց չորս պետութիւններու, եւ ամբողջ
 հուրբանսրով օղբ թնդացուց: Յունաստան ապստամած քրիստո-
 նեայ ընտանիքները խաղողիւնդում կը դառնան իրենց տունը
 տեղը զոր օսմանեան հրէշք քարքանդ քրած էր:

Եւրօպական զօրքերուն մեծ մասը կղզիէն հեռացած պա-
 նուն ժողովուրդը ինդուլցով մը որջերթ մաղթեց անոնց, ու
 իրենց կտորժներուն տար տար արիւնովը ուռճացած ծաղիկնե-
 րէ փունջեր հրամայուց ազատարար սպաններուն:

Թիւրքին ծեղքէն ազատութեան յիշատակին, տօն մը պիտի
 հաստատուի էլ է ֆ թ է ր ի ա (ազատութեան տօն) անունով, զոր
 պիտի տօնեն կրք Եօրկիօս իշխանը (Յունաց թագաւորին երկրորդ
 տղան, եւ ցարը ազատողը ժարօնի մէջ), իբր ընդհանուր կա-
 նաժարիչ Կրէտէ մտնէ: Փատիշարը մինչեւ վերջին ուժը դի-
 մադրեց Եօրկիօսի կառավարչութեան, քայց շան տեղ դնող
 շնորհ Եւրօպի պոնտֆանցի ծայինն. միայն օսմանեան գերհո-

վանաւորութեան իբր շոշորթ Սիւրա ազտիկ կղզեակին վրայ սուլ-
 թանի սեւերես դրօշը պիտի տնկեն, քրիստոնեաներու թշա-
 մանքներէն ու քարկոծումներէն հեռու մտաւր համար:

Կրէտէն վաղը կողմ պիտի ըլլայ. ծիթեմիները իրենց
 խաղաղութեան ոտներով պիտի հովանաւորեն նորէն, նարնջե-
 նիները պիտի զարգարդարեն կղզիին տեսանկարը. արեւը ինծիդ
 պիտի ցոյց քնէ այն հողին վրայ, զոր արիւնփաթաթի մէջ ծրարած
 էին: Կրէտացիներուն ինդուլի արցունքն ու քրտիսքի կաթիլ-
 ները պիտի լլան արիւնի տիրակալութեան ծեփը ու հետկո-
 րուտ պիտի ընեն անզգամ պետութեան մը տխուր անունը. . .

Այն պահուն երբ Կրէտէն ազատութեան որոտներով աշ-
 խարհի աշքուսին կ'արժանանայ, ծմբան մէջը յոյս յանկարծ տա-
 քուկ արեւով մը, Յունաստանի ծառերը կը ծաղկոտրին: Ազա-
 տութիւնը կանխեց գարունը, թերեւս ընութիւնն ալ հմայելով
 իր ծոցին մէջ ապրող մարդկութեան մէկ դժբախտ մասին
 ազատութիւնէն, այսպէս վաղահաս ծնրմակ ու վարդ պալու-
 ներու ու ծաղիկներու հարստող առած վրան, կըզգացնէ թէ
 վարդկային ազատութեան համար ընութիւնն ալ կը ծայնակցի:

Մ Ա Հ Գ Ո Յ Ժ

Վերջին պահուն մեծ կակիծով կ'իմանանք թէ օգոստոս 31-ին
 (հ. տ.) Խրիմցիի գիւղաքաղաքին մէջ (Ռուսիա) թուրքաւտէն
 վախճաններ է մեր ընկերներէն ՅՈՎԱՆՓ ԱՍՏՈՒՐԵԱՆԸ (Թօփալ
 տէրտէր), 23 տարեկան հասակին մէջ:

Սգնիւ հոգի մը ու եռանդուն գործիչ մըն է որ կը կոր-
 մցնենք իր մահով:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Թ Ի Ի Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԻԻՐՈՆ ստացած է՝

„Էրմէլեալ“ 60 հոլըրի, „Եկտր“ 100, Մ. Սալ. 18, Ռո-
 կանաղատ 1,000 եւս 4,100, Ապառաժ 400, Գինեվայր 100 եւս
 50, Ատաւա 20: Գումար 5,848 հոլըրի:

ՎԻՇՍՊԻ „Մ ա Տ“ Կօմիտէն՝

Արծիւ խ. 30 դահեկան, Կամք 20 եւս 20:

ՆԱԻԱՅԱՆԳՍՏԻ Կօմիտէն՝

Ամարանցի „Մահ“ խմբի ստացած նէքներ՝ Տիկին Աշխէն
 10 հոլըրի, Սհ. Թամամեան 5, Վարաժտունի 4, Ռշտունի, Մէ-
 լիք 3ուակ 3-ական, Վարագատ, Արթուն, Քաշ Վարդան, Հայ-
 բիկ, Չահմանց 2-ական, Յամառ, Մոխակ, Արլոք, Գարուն, Ա-
 շք, Պարթեւ, Կուլա, Սեթան, Տիկին Կտան մէկ-մէկ, Աղամ
 55 կօպէկ: Գումար 47 հոլըրի 55 կօպէկ:

Չորսփորէն պատկերներու վաճառումէ 10 հոլըրի: — Կտր
 քաղաքէն Մեքրօպ 2. 10 հոլըրի, Սովինճի 3. 10, Սեդրակ Պ.
 5: — Սեւշուրէն՝ Պղինձ 10, Թօփալ 5, Գարբօ 5, Ռուբէն 20,
 Կերծակ 4, Խեչօ 6, Չօլախ 20, Պաղտասար 6: Գումար 111
 հոլըրի:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կօմիտէն՝

Հոկտեմբերի ամսավճարներ՝ Որոտում խ. 26 դահեկան ողջ,
 Ապտըլ-Մահի 10, Արիւն խ. 10: Նոյեմբերի ամսավճարներ՝ Ար-
 շաւիք խ. 20, Ռուբինեան խ. 8, Արիւն խ. 5: — Վառոդ 4 ու
 կէս, Արշաւիք, ծով 4-ական, Պարոյր 3, Արմենակ 2 ու կէս,
 Ասող 2:

„Տ. Երկաթ“ քղ-ի Ռազարտունեաց խումբ 105 դահեկան
 (փուտ դրամ), Ռուբինեանց 148, Հայկի թոնէն 156, Սողովմէ
 98: Գումար 507 դահեկան փուտ:

ՍՕԼԵԿԻԻ Կօմիտէն՝

20 մարտ — 1 նոյեմբեր 1898 հաւաքած ամսավճարներ 145
 մարկ:

Խմբագրութեան գիմէլ Հետեւեալ Հասցեով՝
 Rédaction du Droschak, Genève (Suisse)